ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԵՊՀ-ն, ՏԿԵՆ-ը և ԶՊՄԿ-ն համատեղ ծրագրեր կիրականացնեն
Արարողությունը կայացել է միջազգային երկօրյա Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի շրջանակում

» 10

«Եթե քեզ բնությունը տվել է այդ հարստությունը, ապա կարողացիր այն օգտագործել ի շահ և ի բարօրություն քո երկրի».
Հարցազրույց Տիմուր Օդիլովի հետ

» 12

Հայ-հնդկական գունագեղ օրեր Քաջարանում.
Հոկտեմբերի 12-ին և 13-ին անցկացվեցին հայ-հնդկական մշակութային օրեր

» 14

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ

№47 • 2024թ.

«Mining Armenia» միջազգային երկօրյա համաժողով

» 2

MINING ARMENIA FORUM

«Mining Armenia» միջազգային երկօրյա համաժողով

Հայաստանի հանքարդյունաբերական ներուժի բացահայտմանն ուղղված երկօրյա միջազգային համաժողովը՝ «Mining Armenia Forum»-ը, միավորել էր պետական կառույցների, մասնագիտական հանրույթի, մասնավոր դաշտի և ներդրումային ընկերությունների շուրջ 200 ներկայացուցիչների մեկ հարթակում:

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

Պանելային քննարկումների, առաջատար ելույթների, հարցազրույցների ձևաչափով անցկացվող համաժողովին մասնակցել են առաջատար խոսնակներ ոչ միայն Հայաստանից, այլև Մեծ Բրիտանիայից, Կանադայից, Ղազախստանից: Հանքարդյունաբերության հանդեպ հանրային վստահության վերականգնման, պետություն-մասնագիտական հանրույթ-մասնավոր համագործակցությամբ ոլորտի խնդիրների բարձրաձայնման և լուծման առաջարկների ներկայացման, ինչպես նաև գլոբալ ներդրումային հնարավորությունների քննարկման այս ձևաչափը հավակնում է դառնալ շարունակական:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը համաժողովի բացման իր ելույթում նշել է, որ Հայաստանը որդեգրել է կայուն զարգացման քաղաքականություն, որի խնդիրն է ապահովել հավասարակշռված տնտեսական զարգացում: **«Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտն ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին, այն մեր երկրի արդյունաբերության և արտահանման կարևորագույն ուղղություններից մեկն է: Ոլորտը հանրապետությունում ունի զարգացման և տնտեսական աճի խթանման էական հեռանկարներ: Այս միջոցառումը լավ հնարավորություն է ոչ միայն քննարկելու և վեր հանելու Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի մարտահրավերները, զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները, այլ նաև կայուն, նորարար տեսլական ձևավորելու համար»,**– ընդգծել է նախարարը:

«Ժամանակակից հանքարդյունաբե-

Միջոցառմանն աջակցել են նաև Հայաստանի հանքարդյունաբերական միջազգային պալատը, «Գրանթ Թորնթոն» աուդիտորական և խորհրդատվական ընկերությունը, «Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերական ընկերությունը և ԲԻԴԻՕ աուդիտորական, հարկային և խորհրդատվական ընկերությունը:

ություն. մարտահրավերներ և հնարավորություններ. Հայաստանի հեռանկարները գլոբալ տնտեսական համատեքստում» խորագրով համաժողովի կազմակերպիչը Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունն էր, գլխավոր հովանավորը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ):

«Հայաստանի տնտեսության համար հանքարդյունաբերությունը առաջամղիչ և հեռանկարային ուղղություն է, և մեր երկիրն ունի զարգացման, ներդրումների ներգրավման, ոլորտի արդիականացման չիրացված մեծ ներուժ: Միավորելով ոլորտի տեղական և միջազգային փորձագիտական միտքը՝ մենք ցանկանում ենք լուծումներ առաջարկել Հայաստանում կայուն և նվազագույն ռիսկերով հանքարդյունաբերական գործունեություն ծավալելու համար»,– ասել է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը:

Համաժողովին անդրադարձ է կատարվել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը: ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին ներկայացրել է Հայաստանի խոշորագույն հանքարդյունաբերական ընկերության և ոլորտի զարգացման տեսլականը:

«Հանքարդյունաբերության զարգացումն այլընտրանք չունի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում, քանի որ մաքուր տեխնոլոգիաներին անցումը պահանջում է ավելի մեծ ծավալի հանքարդյունաբերական նյութերի արդյունահանում: Մինչև 2050 թվականը էլեկտրական մեքենաներով հագեցվածության գլոբալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ կլինի 80 տոկոսով ավելացնել պղնձի համաշխարհային արտադրությունը, ինչը, ըստ տարբեր գնահատականների, նշանակում է մոտ 195 պղնձի նոր նախագիծ աշխարհում»,– նշել է Ռոման Խուդոլին՝ ավելացնելով, որ ԶՊՄԿ-ն համաժողովին աջակցում է ոլորտի միջազգային լավագույն փորձն ու նորագույն զարգացումները Հայաստան բերելու և կիրառելու նպատակով:

Միջոցառմանն աջակցել են նաև Հայաստանի հանքարդյունաբերական միջազգային պալատը, «Գրանթ Թորնթոն» աուդիտորական և խորհրդատվական ընկերությունը, «Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերական ընկերությունը և ԲԻԴԻՕ աուդիտորական, հարկային և խորհրդատվական ընկերությունը:

MINING ARMENIA FORUM

Պղինձը Հայաստանի համար նավթ և գազ կարող է դառնալ. ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլի

Հայաստանի միջազգային հանքարդյունաբերական ֆորումին շատ հետաքրքիր շեշտադրումներ ու որ կարևոր է, թվեր ու փաստեր հնչեցին, որոնք թերևս Հայաստանի տնտեսության ուղղությունները նախանշելու համար կարող էին ուղենիշային լինել: Այսպես, բավական հետաքրքիր տվյալներ կային ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի ելույթում:

Մասնավորապես նա ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ պղինձն անցումային մետաղ է, որն անհրաժեշտ է կանաչ տնտեսության անցնելու համար:

Նրա խոսքերով, պղնձի պահանջարկը կաճի աշխարհում նույն էլեկտրական մեքենաների արտադրության ավելացման ֆոնին, քանի որ էլեկտրական մեքենաների արտադրության համար պահանջվում է միջինում 4 անգամ ավելի շատ պղինձ, քան ներքին այրման շարժիչով մեքենաների արտադրության համար:

«Մինչև 2050 թվականը ավտոպարկերի էլեկտրաֆիկացման գլոբալ նպատակին հասնելու համար պղնձի համաշխարհային արտադրությունը, ըստ տարբեր հաշվարկների պետք է ավելանա 80 տոկոսով: Սա նշանակում է մոտավորապես 195 նոր պղնձի արտադրության նախագծերի իրականացում ամբողջ աշխարհում՝ աջակցելու միայն էլեկտրական մեքենաների պահանջվող արտադրությանը: Սակայն, վերջին 20 տարիների ընթացքում ամբողջ աշխարհում շահագործման է հանձնվել պղնձի ընդամենը 34 նոր հանքավայր: Սա 5 անգամ պակաս է, քան այն, ինչ

անհրաժեշտ է առաջիկա 25 տարում՝ միայն էլեկտրական մեքենաների արտադրության համար»,– նշել է նա:
ԶՊՄԿ գլխավոր տնօրենի խոսքերով, էլեկտրական մեքենաների, արևային մարտկոցների, հողմային գեներատորների արտադրողներն արդեն ահազանգում են, որ անցման համար բավականաչափ ռեսուրսներ պարզապես չեն լինի: **«Իզուր չէ, որ աշխարհի առաջատար ավտոմոբիլային ընկերությունները սկսեցին ներդրումներ կատարել հանքարդյունաբերության, մասնավորապես պղնձի մեջ, քանի որ այն այժմ համարվում է ամենակարևոր անցումային նյութերից: Ռեսուրսների համար մրցակցության մեջ մեծ նշանակություն ունի ընկերությունների և երկրների՝ իրենց ռեսուրսները հնարավորինս արդյունավետ օգտագործելու կարողությունը: Անցումը դեպի կանաչ տնտեսություն մեծ հնարավորություն է այն երկրների համար, որոնք նախկինում ավելի քիչ մրցունակ էին ածխաջրածին արտադրող երկրների համեմատ: Անցումային մետաղները, այդ թվում՝ պղինձը, նավթ ու գազ կարող են դառնալ այս երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար»,**– ասաց Խուդոլին:

Խուդոլին նշել է, որ հանքարդյունաբերությունն ինքնին դինամիկ փոփոխվող և տեխնոլոգիապես զարգացող արդյունաբերություն է, որն էլ ավելի մեծ հնարավորություններ է բացում երկրների և ընկերությունների համար:
«Հարուստ հանքավայրերի սպառումը, թույլ երկրաբանական բազան և դինամիկ զարգացող տեխնոլոգիաները որակապես փոխում են ռեսուրսների հանդեպ վերաբերմունքը: 30 տարի առաջ 0,5%-ից պակաս մետաղի պարունակությամբ հանքավայրերը զարգացման համար ոչ հեռանկարային էին համարվում: Այսօր պղնձի 0.2-0.4% պարունակությամբ հանքավայրերը համաշխարհային պղնձի արտադրության հիմնական հիմքն են: Կառավարությունների և ընկերությունների միջև համագործակցությունը և գործընկերությունը՝ ռեսուրսների հասանելիության և երկրաբանական հետախուզական ծրագրերում ներդրումների հետ կապված հարցերի համատեղ լուծումների համար մեծ նշանակություն են ձեռք բերում:
Նրա խոսքով, հետախուզական ծրագրերի 1%-ից պակասն է վերածվում գործող հանքարդյունաբերական ծրագրի:
Հազար երկրաբանական հետախուզական ծրագրերից միայն 10-ը երբևէ կդառնան հանքարդյունաբերական ձեռնարկություններ: Հանքարդյունաբերական ընկերությունների համար հետախուզական երկրաբանությունը նշանակում է ներդրում, որի հաջողության հավանականությունը 1%-ից պակաս է: Միևնույն ժամանակ, աշխարհում հետախուզման լիցենզիայից մինչև արդյունահանում և արտադրություն միջինում առնվազն 15 տարի է տևում: Սա, թերեւս, ամենառիսկային բիզնես ներդրումն է աշխարհում:
Նույնիսկ աշխարհի առաջատար ընկերությունները չեն կարող իրենց թույլ տալ նման զարգացում առանց համագործակցության, առանց պետական աջակցության»,– ընդգծել է կոմբինատի գլխավոր տնօրենը:
Նա կարծում է, որ Հայաստանի ռազմավարական ապագայի համար պարզապես անհրաժեշտ է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պետական ծրագիր:
«Նոր մարտահրավերները պահանջում են նոր մոտեցումներ, և դա առաջին հերթին նոր տեխնոլոգիաների կիրառումն է, որը համապատասխանաբար հենվում է գիտության, ինչպես նաև տեխնոլոգիաների և սարքավորումներ արտադրողների վրա: Թվայնացման, ավտոմատացման, տեխնոլոգիաների և արհեստական ինտելեկտի օգտագործումն այլևս ապագան չէ, այլ մրցունակ լինելու միակ միջոցը»,– ասել է Ռոման Խուդոլին:

«Պղնձի և մոլիբդենի առաջարկն առաջիկա 10-20 տարիների ընթացքում դեռևս աճելու է». Վարդան Ջհանյան

Տարբեր մետաղներ են օգտագործվում կանաչ անցման մեջ, բայց այն կարևորագույն մետաղները, որ ունենք Հայաստանում պղինձը և մոլիբդենը, կանաչ անցման 5-6 ստրատեգիկ մետաղների շարքում են:

Ե՛վ պղինձը, և՛ մոլիբդենը օգտագործվում են կանաչ էներգետիկայի բոլոր 10 տեխնոլոգիաներում: Համեմատության համար օրինակ, լիթիումը, որը նույնպես կարևորագույն ստրատեգիկ մետաղ է, օգտագործվում է ընդամենը մեկ տեխնոլոգիայում, էլեկտրական մեքենաների և այլ տիպի մարտկոցներում: Անցումը կանաչ էներգետիկային ինչպիսի զարգացում էլ ունենա, պղնձի և մոլիբդենի պահանջարկն աճելու է մոտակա 10, 20 տարիների ընթացքում:

Հանքարդյունաբերության ոլորտն առանձին նախարարության պահանջարկ է զգում

Ե՛վ լիազորությունների առումով, և՛ այն ռեսուրսների, որը պետությունն առանձնացնում է մեր ոլորտի համար, իհարկե սա երկար քննարկելու և շատ կարևոր թեմա է, պահանջարկ կա առանձին նախարարության, որը կզբաղվի էներգետիկայով և մեր ոլորտով:

Նախարարության ստեղծումը կարևոր է նաև այն առումով, որ պետությունը կարողանա ներդրողին ցույց տալ մեր ոլորտի և էներգետիկայի կարևորությունը: Ինչու հենց էներգետիկա և հանքարդյունաբերություն, քանզի դրանք շատ փոխկապակցված ոլորտներ են, և այդպիսի նախարարություն եղել է Հայաստանում: Եվ այն բացառիկ ոլորտներից են, որ Սովետական Միության փլուզումից հետո աճ են գրանցել Հայաստանում: Այսինքն, եթե հսկայական արդյունաբերական ոլորտներ մահացել են ուղղակի, շատ ոլորտներ հետընթաց են ապրել, էներգետիկան և հանքարդյունաբերությունը զարգացում են ապրել:

Նրանց ներդրումն ու կարևորությունն ավելի է աճել վերջին 30 տարիների ընթացքում, նաև ամենահզոր ներուժ ունեցող ոլորտներն են՝ միջազգային զարգացումները հաշվի առնելով:

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

«Գնացե՛ք, գտե՛ք և խոսե՛ք ձեր պոտենցիալ ներդրողների հետ՝ ձեր մասին»

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ԸՍՏ ՄԱՍՈՒՄԱ ՖԱՐՈՒԿԻԻ

Հանքարդյունաբերության ոլորտի փորձագետ և Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքային խմբի ղեկավարը ներկայացրել է իր տեսակետները ոլորտին առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ:

– Տիկին Ֆարուկի, Դուք ղեկավարել եք Հայաստանի հանքարդյունաբերության զարգացման ռազմավարության աշխատանքային խումբը: Կարո՞ղ եք կիսվել այդ աշխատանքների վերաբերյալ մանրամասներով, ինչ փորձառություն եք Դուք բերել այդ գործընթաց:

– Հայաստանի հանքարդյունաբերության ռազմավարության վրա աշխատանքը մշտապես կմնա իմ ամենալավ փորձերից մեկը: Աշխատանքներում ներգրավված էին այնպիսի մարդիկ, ովքեր տիրապետում են հանքարդյունաբերության ոլորտի բոլոր նրբություններին, և նրանք գիտեն, թե ինչպիսի առաջընթաց է անհրաժեշտ: Խումբը լավ աշխատեց մի շատ պարզ պատճառով, քանի որ բոլորն էլ ցանկանում էին ավելի լավ հանքարդյունաբերության ոլորտ ստեղծել, ուստի իմ դերը հիմնականում գործընթացն ուղղորդելն էր՝ համոզվելու համար, որ ճիշտ մարդիկ են խոսում: Որովհետև մենք երբեմն մտածում ենք, որ բնապահպանը և հարկայինի աշխատողը կարիք չունեն իրար հետ խոսելու, բայց նրանք պետք է քննարկմանը մասնակցեն, ուստի դա լավ համատեղ աշխատանք էր:

Եվ, անկեղծ ասած, դա ամենահեշտ աշխատանքներից մեկն էր, որ ես երբևէ արել եմ, քանի որ նրանք լավ գիտեին իրենց գործը, և ես նաև սովորում էի նրանցից:

Ես կարծում եմ, որ Հայաստանը շատ բան ունի առաջարկելու աշխարհին: Չպետք է լինի այն գաղափարը, որ ամեն ինչ պետք է ներմուծվի: Կարծում եմ՝ կան համայնքի ներգրավման և հարկման մոդելներ, որոնք արժեք են ավելացնում, և Հայաստանը կարող է կիսվել դրանով այլ փոքր երկրների հետ: Ես պարզապես կցանկանայի տեսնել, որ դա տեղի ունենա:

– Ձեր պատկերացումներով Հայաստանի հանքարդյունաբերությունը, ի՞նչ հնարավորություններ ունի միջազգային ներդրողներին հետաքրքրելու համար:

– Գնացեք և խոսեք ձեր մասին, դա ամենահեշտ բանն է: Ձեր տնային աշխատանքն է պարզել, թե ի՞նչպիսի ներդրող եք ուզում: Դուք ուզում եք ունենալ պատասխանատու, կայուն ներգրավված որոշակի ներդրող: Այդ դեպքում, առաջին հերթին պարզեք, թե ովքե՞ր են այդ մարդիկ, ո՞րտեղ են նրանք և գնացե՛ք, խոսե՛ք նրանց հետ, դա է ներդրումներ ստանալու ամենապարզ ճանապարհը: Չեմ կարծում, թե համաշխարհային համատեքստը կամ գլոբալ հանքարդյունաբերության ոլորտը բավականաչափ գիտեն Հայաստանի մասին:

Համաժողովի «Բնապահպանություն. հասարակության կառավարում, տեղական մարտահրավերներ գլոբալ համատեքստում» թեմայով պանելային քննարկման մասնակից, ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանի կարծիքով, շահագրգիռ կողմերի ներգրավման գործում կարևոր են անկեղծ, ներառական երկխոսությունը և, ամենակարևորը, վստահության մթնոլորտի ձևավորումը:

«Հանքարդյունաբերության համար վստահության մթնոլորտի ձևավորումը կարևոր է». Արմեն Ստեփանյան

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն

«Հենց հանքարդյունաբերության ոլորտն է ամենաշատը կաղում այս հարցում. անկեղծ երկխոսություն համայնքների և կառավարության միջև: Եթե այդ վստահությունը չի ձևավորվում, ապա ապագան մշուշոտ է լինելու: Հենց սկզբից պետք է խոսել ընդհանուր նպատակների մասին, որոնք ավելի շատ միավորում են մարդկանց, քան բաժանում: Կարևոր է հենց սկզբից ֆիքսել ընդհանուր նպատակները, որպեսզի երկխոսությունը կառուցողական ստացվի»,– ասաց Արմեն Ստեփանյանը:

ՀՀ ՏԿԵ նախկին փոխնախարար Լիլիա Շուշանյանի կարծիքով. **«Այն թափանցիկությունը, հաշվետվողականությունը, որն այսօր կա՝ առնվազն տվյալների հասանելիության մակարդակով, միանշանակ 5-10 տարի առաջ չի եղել, և երևի թե չէր կարելի պատկերացնել, որ նման**

ԼԻԼԻԱ ՇՈՒՇԱՆՅԱՆ
ՀՀ ՏԿԵ նախկին փոխնախարար

ծավալի կարող է լինել»:
Նա նշեց, որ տվյալների հասանելությունը, որին հասել ենք, դա նպատակ չէր, այլ ուղղակի միջոց, որը պետք է օգտագործել տարբեր ոլորտներում կամ ենթաոլորտներում փոփոխություններն անելու և զարգացնելու համար: **«Եթե մենք խոսում ենք ընդհանրապես կայուն զարգացման միջազգային չափորոշիչների մասին, ապա ոչ ոք միանշանակ մեկ չափորոշիչ չունի կայուն զարգացման և ԲՍԿ-ի մասին: Կարծում եմ, որ Հայաստանը չի էլ կարող և չպետք է ընկնի բոլոր այդ գործոնների հետևից: Սակայն, մենք պարտավոր ենք առանձնացնել այն գործոնները և արդեն այդ հասանելի տվյալների վրա կառուցենք մեր գործողությունները և բարելավենք դրանք: Սա ճանապարհ է, որն անընդհատ պետք է շարունակվի, չպետք է կանգնի ինչ-որ փուլում»,**– եզրափակեց Շուշանյանը:

«Համակարգը պետք է լինի մոտիվացնող, փոխզսպող ու կանխատեսելի, ինչը ամենակարևորն է». Բաբկեն Թունյան

Հանքագործների և մետալուրգների միությունը ինստիտուցիոնալ կառույց է, որի հետ պետությունը կարող է համագործակցել: Շատ դեպքերում պետությունը չունի այն ռեսուրսը, որով կարող է որակյալ ուսումնասիրություններ, հետազոտություններ, աշխատանք անել կամ միջազգային փորձն ուսումնասիրել: Եվ այս առումով այդ փոխադարձ համագործակցությունը կարող է շատ ավելի լավ ստացվել: Արդյունքները ցույց կտա ժամանակը, համագործակցությունը նորմալ է ընթանում, այդ կփաստեն նաև ոլորտի ներկայացուցիչները, ասում է ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյանը:

Խաղի կանոնները պետք է հստակ լինեն ներդրողների համար

Կարևոր է այնպես անել, որ ներդրողների համար խաղի կանոնները հստակ լինեն, տարընթերցումների տեղիք չտան, ներդրողները երկարաժամկետ կանխատեսումներ ունենան՝ անկախ քաղաքական իշխանության և այլ հանգամանքների փոփոխությունից, իմանան ինչ ստանդարտներ են գործում իրենց համար, և երկրում կարգավորումները լինեն հավասարակշռված: Այսինքն՝ բնապահպանական պահանջները, լավագույն ստանդարտների կիրառումը, ռիսկերի կառավարումը՝ ամեն ինչ հստակ լինի, և մարդիկ ունենան աշխատելու և շահույթ ստանալու մոտիվացիա: Համակարգը պետք է լինի մոտիվացնող, փոխզսպող ու կանխատեսելի, ինչը ամենակարևորն է:

MINING ARMENIA FORUM

ԵՊՀ-ն, ՏԿԵՆ-ը և ՀՊՄԿ-ն երկրաբանության ոլորտում համատեղ ծրագրեր կիրականացնեն

Երևանի պետական համալսարանը, ՀՀ Տարածքային և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) և Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ՀՊՄԿ) եռակողմ հուշագիր են կնքել: Փաստաթուղթը ստորագրել են ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը և ՀՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:

Կողմերը համաձայնել են միավորել ջանքերը երկրաբանության, հանքարդյունաբերության, հանքավայրերի շահագործման, լեռնամետալուրգիական, հիդրոերկրաբանության և այլ ոլորտներում՝ գիտահետազոտական աշխատանքներ, համատեղ ծրագրեր իրականացնելու համար: Հուշագրի ստորագրման արարողությունը կայացել է միջազգային երկօրյա Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի (Mining Armenia Forum) շրջանակում: ԵՊՀ նշյալ ուղղությունների ուսանողները հնարավորություն կստանան ՀՊՄԿ-ում մասնակցելու արտադրական պրակտիկաների, փորձնակության ծրագրերի, մաս կազմելու ընկերության զարգացման ծրագրերի նախագծմանն ու փորձի փոխանակման այլ ձևաչափերով միջոցառումներում ընդգրկմանը:

Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի խոսքով՝ այս համագործակցությունը լավագույն օրինակն է, որ գիտությունը և արդյունաբերությունը պետք է քայլեն միասին՝ միմյանց ուժեղացնելու և շարունակական առաջընթաց գրանցելու համար: «**Համատեղ ուժերով մենք կկարողանանք մեր երկրի համար կարևորագույն ոլորտներում միավորել մեր ներուժն ու ռեսուրսները՝ նպաստելով կրթական ծրագրերի արդիականացմանը, նորարարությունների ներդրմանն ու երկրի տնտեսության կայուն զարգացմանը: Համագործակցությունը հնարավորություն կընձեռի նաև մեր ուսանողներին ու հետազոտողներին փորձարարական հարթակներում աշխատելու և առաջատար մասնագետների հետ փորձի փոխանակում իրականացնելու, ինչը էական նշանակություն կունենա գիտահետազոտական աշխատանքների արդյունքների կիրառման և արդիականացման հարցում»,**– նշել է ԵՊՀ ռեկտորը:

Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին, մասնավորապես, ընդգծել է, որ կրթությունը ընկերության սոցիալական ծրագրերի կարևորագույն բաղադրիչն է: «**Գործնական գիտելիքների ձեռքբերումն ու ամրապնդումը, գիտահետազո-**

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ ՀՀ կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

տական աշխատանք կատարելը ժամանակակից և հագեցած լաբորատորիաներում նոր որակ է հաղորդում կրթությանը: Նման համատեղ ծրագրերի միջոցով մենք ոչ միայն զարգացնում ենք երիտասարդ սերնդի մասնագիտական հմտություններն ու հետազոտական ներուժը, այլև մեծացնում ենք հետաքրքրությունը հանքարդյունաբերության մի շարք առանցքային մասնագիտությունների նկատմամբ: Որպես պատասխանատու ընկերություն՝ մենք հասկանում ենք մասնավոր հատվածի և բուհերի համագործակցության կարևորությունը և մշտապես մեր ուշադրության կենտրոնում ենք պահում այդ համագործակցությունը»,– ասել է Ռոման Խուդոլին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն էլ պատրաստակամություն է հայտնել ապահովել պրակտիկայի անցկացումը ՀՀ ՏԿԵ նախարարությունում և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում և տրամադրել ՊՈԱԿ-ում առկա նյութերը՝ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով: **«Բոլոր մասնագիտություններով աշխատուժի որակավորումը մեզ համար առաջնային կարևորության հարցերից է, որից անմասն չեն մնում նաև երկրաբանության ու հանքագործության ոլորտները: Այս մասնագիտությունների գծով թափուր մնացող տեղերը մեզ համար ազդակ են գործելու և լուծումներ փնտրելու: Բանակցելով կողմերի հետ՝ մի քանի ուղղություններով համագործակցություններ ենք հաստատել և նպատակ ունենք նպաստել այս կարևոր ոլորտներում ավելի մեծ թվով ուսանողների ներգրավմանն ու հետագայում նրանց միջոցով զարգացման ապահովմանը»,–** ընդգծել է ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը: Հուշագրով նախատեսված գործողություններն ուժի մեջ են մտնում ստորագրման պահից հինգ տարի ժամկետով:

Տիմուր Օդիլովի հետ հարցազրույցը վարեց Լիլիթ Իսրայելյանը

«Եթե քեզ բնությունը տվել է այդ հարստությունը, ապա կարողացիր այն օգտագործել ի շահ և ի բարօրություն քո երկրի»

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

Հարցազրույց Haller Lomax ընկերության համահիմնադիր-գործընկեր (Ղազախստան), փորձագետ Տիմուր Օդիլովի հետ:

– Պարոն Օդիլով, շնորհակալություն, որ ժամանակ գտաք մեր զրույցի համար: Կխնդրեմ ներկայանաք, որից հետո անցնենք բուն զրույցին: Ձեր գործունեության ոլորտը և Հայաստանում Ձեր գտնվելու պատճառը:

– Ես իրավաբանական ընկերության գործընկեր եմ, բնական ռեսուրսների, շրջակա միջավայրի և հանքարդյունաբերական ոլորտի փորձագետ, խորհրդատու:

Եղել եմ Ղազախստանում ընդերքօգտագործման օրենսգրքի մշակման աշխատանքային խմբի անդամ, առավել փոքր ներգրավմամբ նմանատիպ աշխատանքներ եմ իրականացրել Սաուդյան Արաբիայում, ավելի վաղ Ուզբեկիստանի կառավարության խորհրդականն էի՝ կրկին հանքարդյունաբերական հարցերով: Այժմ խորհրդատվական ծառայություններ եմ մատուցում տարբեր շահագրգիռ կողմերի, միջազգային ընկերությունների, կառավարությունների՝ մասնավորապես ռեֆորմների

կայացման, ընդերքօգտագործման օրենսգրքերի մշակման հարցերում:

– Պարոն Օդիլով, որպես փորձագետ, Ձեր կարծիքով՝ որոնք են այսօր հանքարդյունաբերական ընկերությունների առջև ծառացած հիմնախնդիրները:

– Ես ծանոթացա Հայաստանի օրենսդրությանը՝ ընդերքօգտագործման ոլորտի շրջանակում, և հասկացա, որ պահպանվել են որոշ մոտեցումներ կամ կարգավորման գործիքներ, որոնք գոյություն են ունեցել սովետական ժամանակաշրջանում: Դա առաջինը, իսկ երկրորդը, Հայաստանի օրենսդրությունը ընդերքօգտագործողների և ներդրողների համար առաջին հերթին պետք է կարողանա երաշխիքներ տրամադրել, որ գեոլոգամարկշեյդերական աշխատանքների արդյունքում հայտնաբերված մետաղները կարող են արդյունահանվել: Սա շատ կարևոր պահ է՝ ներդնողների համար: Եվ ընդերքի շահագործման օրենքը պետք է լինի ծայրահեղ թափանցիկ և մրցունակ:

Կրկնում եմ՝ սա կարևոր է, որ միջազգային ներդնողները՝ խոշոր, միջին կամ փոքր, իսկապես ուշադրություն սևեռեն Հայաստանին:

Հայաստանով հետաքրքրված յուրաքանչյուր ներդրողի համար անչափ կարևոր է օրենսդրության կայունությունը: Մանրամասնեմ՝ օրենքները, որ կարգավորում են ոլորտի գործունեությունը, անընդհատ փոփոխությունների չենթարկվեն, այն էլ՝ դեպի վատը, այլ՝ կատարելագործվեն:

Ես գիտակցում եմ, որ այս սկզբունքը կարող է չկիսել պետական ապարատի մի մասը, առավել ևս հայրենասիրության ոգով տարված պետական պաշտոնյաները: Բայց սա է իրականությունը: Եթե դուք բավարարում եք ներդրողների սպասումներն ու ակնկալիքները, նրանք հաճույքով են ներդրումներ անում:

– Գաղտնիք չէ, որ գոյություն ունեն հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ միֆեր, թե արդյունաբերությունը վնասում է բնությանը, անխնա օգտագործում է ընդերքը և այլն: Ինչպես պայքարել այդ միֆերի դեմ:

– Այդ միֆերը անհիմն չեն, չէ որ դրանք էլ իրենց տարածման դրդապատճառներն ունեն: Դրանք ծնվում են անպատասխանատու գործունեություն ծավալող ընկերությունների պատճառով: Եվ այն պատճառով, որ պետությունը նրանց անպատասխանատվության վրա աչք է փակում: Օրինակ սովետական իշխանությունը այնքան էլ հոգացավ վերաբերմունք չուներ շրջակա միջավայրի նկատմամբ: Հարցը ծագեց միայն խորհրդային պետության փլուզումից հետո: Այն ժամանակ պետական քաղաքականության կենտրոնում պետական շահն էր, այլ ոչ՝ անհատը: Այժմ պետական քաղաքականության կենտրոնում մարդն է՝ նրա կյանքը, առողջությունը, բարեկեցությունը: Այն ժամանակ մարդը զուտ «գործիք» էր: Ես չեմ ասի՝ դա լավ է, թե վատ, դա միայն արձանագրված փաստ է: Եթե այլ կերպ լիներ, հավանաբար Սովետական Միությունը Երկրորդ Համաշխարհայինում հաղթանակ չէր կրի: Ահա թե ինչու՝ ամեն ժամանակաշրջան իր քաղաքականությունն է թելադրում:

– Որքան էլ արագ զարգանան ժամանակակից տեխնոլոգիաները, արհեստական ինտելեկտը և այլն, մարդը եղել է, կա և մնում է ամենակարևոր ռեսուրսը, բայց արդյո՞ք մարդն ինքն իրեն պատասխանատու և պաշտպանված է զգում, ինչ է ցույց տալիս ձեր փորձը:

– Ամեն ինչ կախված է ընկերության մշակույթից և նրանից, թե ինչ քաղաքականություն է վարում պետությունն այդ ոլորտում:

Յուրաքանչյուր բիզնես շահույթ է հետապնդում և դա նորմալ է: Բիզնեսը պետք է պետության կողմից ճիշտ կանոնակարգվի, այլ ոչ՝ կառավարվի:

Օրինակ Ղազախստանում բախվել էինք մի խնդրի, երբ տարեկան տասնյակ հանքափորներ էին մահանում աշխատավայրում: Պետությունը աչք էր փակում: Այսինքն՝ ամեն ինչ հիմնականում կախված է պետությունից, խաղի կանոններից: Ինչպիսին խաղի կանոններն են, այնպիսին էլ այդ կանոնները ընդունում է բիզնեսը և հասարակությունը:

– Բայց ի վերջո պետք է հասկանալի և տեսանելի լինի, ինչպես է հանքարդյունաբերությունը փոխում մարդկանց կյանքի որակը, այն բարեկեցիկ դարձնում:

– Բնական ռեսուրսների շահագործման երկու ճանապարհ գոյություն ունի: Օրինակ բերեմ ավստրալիական փորձը՝ առաջին ճանապարհը նկարագրելու համար:

Ավստրալիան սովորական հանքարդյունաբերական երկիր է, այնտեղ չկան բարձր տեխնոլոգիաներ: Առանց վերամշակումների, նրանք ուղղակի ընդերքից հանում են այդ ռեսուրսները և վաճառում Չինաստանին, ասիական երկրներին: Վճարում են թափանցիկ, հաստատուն հարկեր, հոգ տանում շրջակա միջավայրի մասին, կոռուպցիան հասցվել է նվազագույնի: Նրանք զարգացնում են մարդկային կապիտալը, որը ստեղծել է աշխարհի ամենահարմարավետ քաղաքները. Ադելաիդա, Պերտ, Մելբուռն, Սիդնեյ: Բոլորն են ուզում այնտեղ ապրել:

Կան երկրներ, որ օգտագործում են հումքային հավելումների կոմպլեքսը: Այդպես վարվում էին և խորհրդային երկրները: Իսկ արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում հայտարերցին՝ չենք ուզում զարգացած երկրների հումքային հավելում լինել: Եվ այս ստանդարտների հիմքով խաղում են արդյունաբերական քաղաքականության հետ:

Հումք չենք վաճառի, կստեղծենք բարձրակարգ ապրանքներ: Դրա համար սակայն, ավելի լավ պայմաններ են անհրաժեշտ:

Գաղափարին հավատում են մարդիկ, որ կստեղծեն պահանջված և բարձրորակ ապրանքներ, պետք չէ հումքը վաճառել, բայց համապատասխան ստրուկտուրաներ էլ, չկան:

Աշխարհի տեխնոլոգիական երկրները բնական ռեսուրսներ չեն ունեցել. Թայվան, Իսրայել, Սինգապուր: Բոլոր ռեսուրսները թվարկված երկրները գնել են և կրթության ու համապատասխան ստրուկտուրաներ ստեղծելու արդյունքում են կայացել:

Ուստի կարևոր է սխալ ճանապարհով չգնալ, այլ՝ գնալ ընդերք օգտագործման ճիշտ ճանապարհով, շահույթ ստանալ և արդեն համապատասխան ներդրումներ կատարել:

Ոլորտի բոլոր սխալներն արձանագրված են, սակայն դրանցից ցավոք դասեր չեն քաղվում:

Եվ եթե քեզ բնությունը տվել է այդ հարստությունը, ապա կարողացիր այն օգտագործել ի շահ և ի բարօրություն քո երկրի:

– Ցավոք Հայաստանում նվազել է երկրաբանի կամ ոլորտին անհրաժեշտ այլ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունը:

– Գիտեք, դա ևս հասկանալի է: Եվ դասախոսական կազմն է ժամանակի հետ թուլանում, և դասավանդման մեթոդիկան: Համենայն դեպս, Ղազախստանում այդպես էր:

Ընկերությունները, պետությունը կարող են միջոցներ ստեղծել, որ ուսանողը վերապատրաստվի արտերկրում, պայմանով, որ կվերադառնա Հայաստան, կաշխատի տեղում: Սա ընդունված տարբերակ է:

Ղազախստանի օրինակը բերեմ: Պետությունը ուսանողին ուղարկում էր արտերկրում սովորելու մի պայմանով, որ կվերադառնա և 5 տարի կաշխատի իր նախընտրած ոլորտում, կարևորը՝ Ղազախստանում:

Հայ-հնդկական գունագեղ օրեր Քաջարանում

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ
QR կոդը՝
ԻՄԱՑԻՐ ավելին:

Հոկտեմբերի 12-ին և 13-ին Քաջարանում անցկացվեցին հայ–հնդկական մշակութային օրեր՝ հագեցած տարաբնույթ միջոցառումներով: Այցելուները ծանոթացան Հայաստանի ու Հնդկաստանի ազգային պարերին, ճաշակեցին երկու երկրների ավանդական ուտեստները: Լարախաղացի ելույթը օրվա ամենադիտարժան հատվածն էր: Տաղավարները լիքն էին երկու ազգերի հարուստ մշակույթը ներկայացնող ցուցանմուշներով: Ներկաները հնարավորություն ունեցան գորգ ու թաղիք գործելու՝ վարպետաց դասերին մասնակցելով: Իսկ հայկական խոհանոցը լավագույնս ներկայացնում էր ավանդական ճաշացանկը:

Ավելի վաղ Հնդկաստանի դեսպանի տեղակալը, ծրագրի աջակիցներն ու գործընկերները այցելել էին Քաջարանի մշակույթի պալատ:

Դեռևս մեկ տարի առաջ էր Քաջարանի մշակույթի պալատը առաջարկ ստացել մասնակցելու Արտբոքսի ծրագրին և ներկայացնելու դրամաշնորհային նախագիծ: Մշակույթի պալատի մշակած ծրագիրը հաջողությամբ պսակվեց, որի արդյունքում քաջարանցիները երկու օր վայելեցին գունագեղ միջոցառումը:

Կազմակերպիչների խոսքով՝ նման միջոցառումների անցկացումը առավել կարևոր է հատկապես՝ մարզերում:

Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպանի տեղակալ Ռաջ Բալան ընդգծում է՝ երկու ազգերի միջև հաստատված բարեկամությունը տարիների պատմություն ունի. **«Այս միջոցառումը շատ կարևոր է, այն մեր համատեղ աշխատանքի արդյունքն է: Առաջին անգամ եմ Սյունիքում, ուրախ եմ այստեղ գտնվել: Ինչ խոսք երկար էր ճանապարհը, բայց արժեր հասնել Քաջարան: Մարդիկ շատ ջերմ և հյուրընկալ են: Հուսով եմ՝ մեր համագործակցությունը կշարունակվի մի շարք այլ ծրագրերի շրջանակներում»:**

Ազգերի միջև մշակութային կապերի ամրապնդմանը միտված ծրագրին աջակցել են ՀՊՄԿ–ն և ՀՀ–ում Հնդկաստանի հանրապետության դեսպանությունը:

Աննա Մելքումյան

KOMATSU

P&H 4100XPC

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԷՔՍԿԱՎԱՏՈՐ

Հանքարդյունաբերական ամենահզոր և ամենամեծ էլեկտրական էքսկավատորներից մեկն է, որը նախատեսված է բաց հանքերում աշխատելու համար: Այն մշակվել է P&H Mining Equipment ընկերության կողմից, որն այժմ մտնում է Komatsu խմբի մեջ: Այս մոդելը ամենատարածվածներից է և օգտագործվում է ածուխի, պղնձի և երկաթի հանքավայրերում: Այն տպավորում է ոչ միայն իր չափսերով, այլև իր տեխնոլոգիական բնութագրերով, որոնք անփոխարինելի են դարձնում աշխատանքը խոշոր հանքավայրերում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բարձրությունը՝	մոտ 20 մետր
Քաշը՝	մոտ 1600 տոննա
Տարողությունը՝	մինչև 120 տոննա մեկ շերեփում
Շերեփի տարողությունը՝	49–115 խորանարդ մետր (կախված կոնֆիգուրացիայից)
Շարժիչի հզորությունը՝	մոտ 3300 կՎտ (4500 ձիաուժ)